Արձանագրություն N 6

N «ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1»
Ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 30 հունվարի 2019թ.

ժ.16:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

անդամներ՝ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Հանձնաժողովի քարտուղար՝ Հայկանուշ Թովմասյան

Օրակարգ

Որակավորման չափանիշների գնահատման նիստի մասին

1. Որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացրած մասնակիցների անվանումները և էլեկտրոնային փոստի հասցեները:

<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգին որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթեր ներկայացրել են՝
2.1 «Յունիմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ, ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Աբովյան, Հանրապետության փ. 11/5, հեռ. 091-629182, 0222-62196, էլ.փոստ՝ info@unimedmc.com

2. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

2.1 «Յունիմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0

3.Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն հանձնաժողովը որոշեց.

1. 1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 46-րդ կետի դրույթներով
«Յունիմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ի Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետնանց պարտավորությունների ինչպես նաև հրավերով <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ներկայացրած (եզրակացություն) հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող՝ հիմք ընդունելով **<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>>** ծածկագրով հրավերի I մասի 7.13 կետի 4 ենթակետում նշված փաստաթղթերի առկայությունը:
1.2 «Յունիմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն որակավորման փաստաթղթերը ներկայացրել է ոչ ամբողջական, մասնավորապես ֆինանսական միջոցներ չափանիշի (նախկինում կատարված նմանատիպ պայմանագիր) մասով ոչ մի փաստաթուղթ կցված չէր, որը հրավերով պարտադիր պահանջ է:
Գնահատող հանձնաժողովի նիստը կասեցվել է մեկ աշխատանքային օրով, մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր նշված անհամապատասխանությունները շտկելու համար:
«Յունիմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում /մեկ աշխատանքային օրում/ շտկել է արձանագրված անհամապատասխանությունը

4. Ըստ որի գնահատող հանձնաժողովը որոշեց՝

4.1 **<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>>** ծածկագրով ընթացակարգի 1 չափաբաժնի համար առաջին տեղը զբաղեցնող է ճանաչվում «Յունիմեդ բժշկական կենտրոն» ՍՊԸ-ն, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, որի հետ առաջարկվում է կնքել պայմանագիր:

4.2 *Հասատել պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:*

4.3 *"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:*

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ – 0

5 <u>Շահերի բախման բացակայության մասին</u>

<<ԱՀԱԿ-ԷԱՃԾՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նշված ծածկագրով գնման ընթացակարգի որակավորման փաստաթղթերի գնահատման նիստից հետո հայտարարում է, որ հիշյալ ընթացակարգի առնչությամբ չունի շահերի բախում:

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Լիանա Խաչատրյան /բուժական գծով տնօրենի տեղակալ/

Անդամներ՝ _____ Վարդան Գրիգորյան /ֆինանսատնտեսական գծով տնօրենի տեղակալ/

_____ Աննա Հովհաննիսյան /Կադրերի տեսուչ/

Քարտուղար՝ _____ Հ. Թովմասյան